Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ

(Երվանդ Տեր-Մինասյանի (1879—1974) ծննդյան 100-ամյակի առթիվ)

Երբ սրանից մի տասը տարի առաջ Երվանդ Տեր-Մինասյանին հայտնեցի, որ պատրաստվում եմ զբաղվել հայ-ասորական հարաբերությունների ուսումնասիրությամբ, նա ասաց. «Ինչ որ պետք էր, ես արդեն արել եմ, այլևս անելու բան չկա»: Ականավոր գիտնականի այս անմիջական խոսքերի մեջ ծերունական հպարտությունից ավելի ես հակված եմ նկատելու սեփական վաստակի առողջ գիտակցության փաստը: Իսկապես, Երվանդ Տեր-Մինասյանը այնպիսի խոշոր ավանդ է ներդրել հայ-ասորական կապերի ուսումնասիրման գործում, որ նրան կարելի է համարել գիտության այդ բնագավառի հիմնադիրը և առայժմ չգերազանցված հետազոտողը:

Երվանդ Տեր-Մինասյանը ըստ ամենայնի գնահատելով ասորերենից կատարված հայերեն թարգմանությունների կարևոր նշանակությունը[1], այդուհանդերձ հատուկ կերպով չի զբաղվել գրական առնչությունների ուսումնասիրությամբ: Նրա գիտական ժառանգության մեջ կարելի է գտնել այդ խնդիրներին նվիրված միայն մեկ-երկու փոքրածավալ աշխատություն, ինչպես օրինակ, 1921 թ. գրված «Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արևելից»-ը և նրա ասորական սկզբնատիպը» գրախոսությունը[2] և 1964 թ. հրատարակված «Զգոն» կոչված գրքի հեղինակի հարցը» հոդվածը[3]:

Վաստակաշատ բանասերի գիտական հետաքրքրությունների հիմնական առարկան է հանդիսացել հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների պատմությունը, մի բնագավառ, որի համակողմանի մշակման ողջ երախտիքը պատկանում է նրան: Այդ նյութն ամբողջությամբ լուսաբանված է Երվանդ Տեր-Մինասյանի «Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց Եկեղեցիների հետ»[4] մենագրության (1908 թ.) և «Նեստորականությունը Հայաստանում» աշխատության (1946 թ.) մեջ[5]: Հեղինակը նույն նյութին վերաբերող մի շարք մասնակի խնդիրներ է քննել նաև

---

[1] Հմմտ. **Ե. Տեր-Մինասյան,** Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 287—290:

[2] Անդ, էջ **65—87:**

[3] Անդ, էջ **411—424:**

[4] **Ե. Տեր-Մինասյան,** Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց Եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908: Մենագրությունն առաջին անգամ լույս է տեսել 1904 թ. գերմաներեն. տե՛ս **Erwand Ter-Minassiantz,** Die Armenische Kirche in ihren Beziehungen zu den Syrischen Kirchen bis sum Ende des 13. Jahrhunderts, Leipzig, 1904, Էջմիածնի հրատարակությունը վերջինիս վերանայված և լրացված տարբերակն է:

[5] Տե՛ս **Ե. Տեր-Մինասյան,** Պատմա-բանասիրական հետազոտություններ, էջ 330—393:

հետևյալ հոդվածներում. «Այսպես կոչված Պարսից ժողովը» (1907 թ.)[6], «Մանազկերտի 726-ի ժողովի վեց ասորի եպիսկոպոսները և Խոսրովիկ թարգմանչի հիշած երկու ասորական վանքերը» (1907 թ.)[7], «Բաբգեն կաթողիկոսի ժողովի թվականը և տեղը» (1908 թ.)[8], «Կնիք Հաւատոյ» ժողովածուն և Հայոց Եկեղեցու դավանաբանական դիրքը Զ և Է դարերում» (1921—1922 թթ.)[9] և «Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» երկի թարգմանության ժամանակը» (1960 թ.)[10]: Թվարկված հոդվածներից առաջին երեքի հիմնական դրույթները լիովին արտացոլվել են վերը նշված «Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները...» մենագրության մեջ, իսկ վերջին երկուսն, ընդհակառակն, հանդիսանում են մենագրության առանձին դրույթների հետագա ծավալումն ու հիմնավորումը: Այսպիսով, հիշատակված աշխատությունները իրենցից ներկայացնում են մի նպատակասլաց ամբողջություն, և այդ պատճառով հարկ չկա մեկ առ մեկ անդրադառնալ յուրաքանչյուրին:

Իր լավագույն ուսումնասիրությունը՝ հայ-ասորական եկեղեցական հարաբերություններին նվիրված գերմաներեն գիրքը, Ե. Տեր-Մինասյանը հրատարակել է քսանհինգ տարեկան հասակում և այդ առաջին իսկ ծավալուն հետազոտությամբ իր համար արժանի տեղ ապահովել հայագիտական պատմության մեջ: Այդ մեծարժեք մենագրությունը և նրա ընդլայնված հայերեն վերահրատարակությունը լայն արձագանք գտան ժամանակի գիտական մամուլում: Գրվեցին բազմաթիվ գրախոսություններ[11], որոնցից շատերի հեղինակները բարձր գնահատական տվին Ե. Տեր-Մինասյանի գործին՝ ընդգծելով նրա բոլոր կարևոր արժանիքները: Հեղինակի համարձակ եզրահանգումները և հետազոտության բերած անակնկալ նորույթները տեղիք տվին նաև քննադատական արձագանքների, որոնք, սակայն, մի շարք արդարացի դիտողություններով հանդերձ, չկարողացան խախտել մենագրության հիմնական դրույթները:

Մատենագիտական բնույթի այս անհրաժեշտ ներածությունից հետո տեսնենք, թե ինչ որոշակի ներդրում ունի Ե. Տեր-Մինասյանը հայ-ասորական հարաբերությունների և ընդհանրապես Հայոց Եկեղեցու պատմության ուսումնասիրման գործում:

Ե. Տեր-Մինասյանի հիշյալ մենագրության մեջ առաջին անգամ ամբողջական շարադրանքով ներկայացվեց հայ-ասորական դարավոր հարաբերությունների պատմությունը, որ ինքնին արդեն նշանակալից երևույթ էր հայագիտության բնագավառում: Առկա բոլոր աղբյուրների հիման վրա հեղինակն ստեղծել է մի կուռ տեսություն այդ հարաբերությունների բնույթի և նրանց որոշակի դրսևորումների վերաբերյալ: Հայ-ասորական եկեղեցա-դավանաբանական հարաբերությունների ուսումնասիրման խնդիրն, այսպիսով, ըստ էության լուծված պետք է համարել: Ընդ որում, Ե. Տեր-Մինասյանի հետևություններից մի քանիսը, որոնք վերաբերում են հայ ժողովրդի հոգևոր կյանքի շրջադարձային երևույթներին, հաստատուն տեղ են զբաղեցնում հայ պատմագիտության նվաճումների շարքում: Բացառապես նրա անվան հետ է կապված, օրինակ, հետևյալ երեք կարևոր դրույթների գիտական հիմնավորումը:

1. Ասորական Եկեղեցին Հայաստանում ազդեցություն է ունեցել միայն մինչև Ե դ. կեսերը: Սկսած Զ դարից Հայոց Եկեղեցին, ընդհակառակն, ինքն է «ազդեցութիւն գործում բաժան-բաժան եղած ասորական Եկեղեցու թուլացած հատուածների վրայ և վերջիններիս կողմից ճանաչում իբրև ուղղափառ և օրինակելի Եկեղեցի»[12]:

2. Զ դ. կեսերից մինչև առնվազն Ը դ. սկիզբը Հայոց Եկեղեցին պաշտոնապես հարել է միաբնակության ամենահետևողական թևին՝ հուլիականությանը:

3. Նեստորականությունը թեև բազմաթիվ փորձեր է կատարել Հայաստանում հաստատվելու, բայց որևէ հաջողության չի հասել և սկզբից ևեթ վճռական հակահարված է ստացել:

Այժմ մեկ առ մեկ անդրադառնանք ընշ-

[6] Անդ, էջ 45—58:
[7] Անդ, 59—64:
[8] Անդ, էջ 31—44:
[9] Անդ, էջ 88—118:
[10] Անդ, էջ 394—410:
[11] Նշենք միայն նրանցից ամենակարևորները. **P. Peeters**, „Analecta Bollandiana", t. XXIV, 1905 p. 269—272; **S. Weber**, „Literarische Rundschau": 1905, N 6, S. 208—210; **G. Krüger**, „Theo'ogische Literaturzeitung", herausgegeben von Adolf Harnack und Emil Schürer, 1906, N 2, S· 58—60 Հ. Թոփչյան, «Լոյս» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1905, էջ 740—744, 764—767, 833—837, 860—863, 903—906, 930—933, 958—961, 1005—1008, 1054—1058. **Ն. Ակինյան**, «Հանդէս ամսօրեայ», 1907, էջ 252—256 և 1908, էջ 350—351. **Մ. Խոստիկյան**, «Արարատ», 1907, էջ 1094—1099. **Կ. Վ.**, «Բազմավէպ», 1908, էջ 524—525;

[12] **Ե. Տեր-Մինասյան**, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները, էջ 62;

ված հարցերից յուրաքանչյուրի տերմինաբանական մեկնաբանությանը:

1. Ինչպես հայտնի է, սկսած Գ դ. սկզբից Հայաստանում քարոզչական գործունեություն են ծավալել ազգությամբ ասորի մի շարք վարդապետներ՝ Բարդածան Եդեսացին, Հակոբ Մծբնացին, Դանիել Ասորին, Շաղիտան և ուրիշներ: Ասորական ազդեցությունը Հայաստանում լայն ծավալում է ստացել հատկապես Հայոց դարձից հետո՝ ողջ Դ դարում և Ե դ. առաջին կեսում: Այդ ազդեցության բազմազան դրսևորումներն են՝ ասորի հոգևորականության գործունեությունը Հայոց Եկեղեցում, ասորական անապատական շարժման թափանցումը Հայաստան, հունարենի կողքին ասորերենի գործածությունը եկեղեցական ժամերգության մեջ, Հայաստանում հունական և ասորական դպրոցների հիմնադրումը, հայկական այբուբենի ստեղծումից հետո ասորական ստվարածավալ գրականության թարգմանությունը, հայոց լեզվում ասորական եկեղեցական բառերի առկայությունը և այլն: Ե. Տեր-Մինասյանը մեծ կարևորություն է տալիս հատկապես ասորական և հունական կուսակցությունների պայքարին, այն համարելով «Հայոց Եկեղեցու Դ և Ե դարերի պատմութեան էական նիւթը»[13]: Պետք է նշել սակայն, որ այս հարցում արժանահիշատակ հեղինակը մի շարք այլ հետազոտողների նման ընկել է որոշ չափազանցության մեջ: Մասնավորապես համոզիչ չէ այդպիսի պայքարի արտահայտություն համարել Գրիգոր Լուսավորչի և Մանազկերտի եպիսկոպոս Աղբիանոսի տների միջև եղած երկարատև հակամարտությունը[14]: Ասորական կուսակցությունը Հայաստանում նկատելի պայքար է ծավալում միայն սկսած Ե դ. 30-ական թվականներից: Դա բացատրվում է հետևյալ հանգամանքով:

410 և 424 թվականների ժողովներով Պարսկաստանի ասորախոս քրիստոնեությունը վերջնականապես ձևավորվեց որպես առանձին Եկեղեցի և ճանաչվեց արքունիքի կողմից: Օգտվելով այն բանից, որ հայոց պետականության վերացմամբ Հայաստանի մեծ մասը հայտնվեց Սասանյան տերության կազմում՝ Պարսկաստանի ասորական Եկեղեցին փորձեց իր ազդեցությունը տարածել նաև Հայ Եկեղեցու վրա և դառնալ ողջ քրիստոնյա բնակչության ներկայացուցիչը արքունիքի առջև: Վերջինս ընդառաջ գնաց ասորիների նկրտումներին, հույս ունենալով, ըստ երևույթին, հայերին անջրպետել հունական ազդեցությունից: Դրա ապացույցը պետք է համարել այն փաստը, որ Ե դ. 30-ական թվականներին Հայոց Եկեղեցու կաթողիկոսական գահին հաջորդաբար հայտնվում են երկու ասորի հոգևորականներ՝ Բրքիշոն և Շմուելը: Պարսկաստանի ասորական Եկեղեցին՝ այլ կերպ կոչված Արևելից Եկեղեցի, հայերի նկատմամբ որոշ ոտնձգություններ է կատարում նաև Ե դ. 60—80-ական թվականներին, երբ պաշտոնապես որդեգրում է Արևմուտքում հալածված նեստորական ուսմունքը:

Վահան Մամիկոնյանի ապստամբությունից հետո, երբ Սասանյան արքունիքը ճանաչում է Հայոց Եկեղեցու իրավունքները և հրաժարվում հայերի դավանանքի նկատմամբ վարած դաժան քաղաքականությունից, իրերի վիճակը լրիվ փոխվում է: Այժմ արդեն, ինչպես նշում է Ե. Տեր-Մինասյանը, ասորիներն իրենք են դիմում հայերի օգնությանը, և, ընդհակառակն, Հայոց Եկեղեցին է սկսում ազդեցություն գործել ասորական Եկեղեցու առանձին հատվածների վրա:

Դավանաբանական վեճերի հետևանքով Ե դ. վերջում ասորական Եկեղեցին կորցրել էր իր երբեմնի հզորությունը: Բյուզանդական կայսրության ասորի հպատակները բռնել էին միաբնակության կողմը, իսկ Պարսկաստանում բնակվող ասորիները, ինչպես ասացինք, որդեգրել էին նեստորական ուսմունքը: Սակայն Պարսկաստանի հյուսիս-արևմուտքում դեռևս կային որոշ ասորաբնակ շրջաններ, որտեղ նեստորականությունը չէր կարողացել հաստատվել: Այդ շրջանների հոգևոր առաջնորդները, քաղաքական անջատվածության պատճառով հնարավորություն չունենալով դիմել Ասորիքի իրենց ազգակիցներին, Զ դ. սկզբից սկսում են մերձեցման ուղիներ որոնել Հայոց Եկեղեցու հետ:

Այսպես, 505/6 թ. Պարսից աշխարհից Բաբգեն կաթողիկոսի (490—515 թթ.) մոտ են գալիս մի քանի ասորի հոգևորականներ և խնդրում պարզել Հայոց Եկեղեցու դիրքորոշումը նեստորականության նկատմամբ, որովհետև նեստորականները լուր էին տարածել, թե իրենց և հայերի դավանանքը նույնն է: Այս փաստը Ե. Տեր-Մինասյանը համարում է հարևան Եկեղեցիների մեջ Հայոց եկեղեցու ունեցած «առանձնայատուկ դիրքի» վկայությունը[15]: «Զ.

[13] Անդ, էջ 21:

[14] Այս ծայրահեղության վրա ուշադրություն է հրավիրվել դեռևս 1905 թ., տե՛ս **Հ. Թոփչյան**, նշվ. աշխ., էջ 764:

[15] **Ե. Տեր-Մինասյան**, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները, էջ 79:

դարուց սկսած,—գրում է նա,—ասորիներն իրենց հաւատոյ ճշմարտութեան համար սկսել են իրենց համաձայնութիւնը հայոց հետ շեշտել և այդ ապացոյցը շատ պարզ կերպով երևում է, որ ծանրակշիռ է եղել: ...Այս հանգամանքը ամենանշանաւոր մոմենտներից մէկն է Հայոց Եկեղեցու և ասորական կուսակցութիւնների յարաբերութեան մէջ: Ոչ մէկը այդ կուսակցութիւններից չի կամենում հաղորդակցութիւնը կըտրած լինել հարևան Հայոց Եկեղեցու հետ, այդ պատճառով էլ ամեն կողմից աշխատում են նրան գրաւել իրենց կողմը»[16]: «Եւ այդ հասկանալի է,—ավելացնում է Ե. Տեր-Մինասյանը,—ասորի հարևանները տեսել էին թէ ինչպէս Հայոց Եկեղեցին իւր հաւատի համար հզօր պարսիկների դէմ ազատ համարձակ կռուի էր ելել և երկարատև անհաւասար պայքարից պատուով և իբրև յաղթական դուրս եկել: Նրանք տեսնում էին որ պարսիկներն անգամ հայերի հետ ուրիշ կերպ էին վարուում, նրանց զօրեղ իշխաններից ակնածելով»[17]:

Հայոց Եկեղեցու ազդեցության մյուս կարևոր վկայությունն է այն փաստը, որ Զ դ. կեսերին Ներսես Բ կաթողիկոսը (548—557 թթ.) Աղձնիքի միաբնակ ասորիների խնդրանքով նրանց համար եպիսկոպոս է ձեռնադրում Աբդիշո երեցին: Ի միջի այլոց հայտնի է, որ դրանից առաջ էլ Նինվեի մերձակայքի ասորիների համար մի եպիսկոպոս էր ձեռնադրել Հայոց Քրիստափոր Ա կաթողիկոսը (539—545 թթ.): Ե. Տեր-Մինասյանի հիմնավոր ենթադրությամբ՝ Անտիոքի պատրիարքությունից կտրված այս թեմի եպիսկոպոսները հետագայում էլ շարունակել են ձեռնադրվել հայ կաթողիկոսների կողմից, մինչև հավանաբար Է դ. սկիզբը, երբ բյուզանդացիների առաջխաղացմամբ հնարավոր եղավ վերականգնել կապը Անտիոքի հետ: Այս փաստերը ցույց են տալիս, որ Հայոց Եկեղեցին ըստ էության դարձել էր Սասանյան տերության բոլոր միաբնակ քրիստոնյաների հոգևոր առաջնորդը:

2. Ե. Տեր-Մինասյանի մյուս կարևոր եզրահանգումը, որ անակնկալ էր հայագետների համար, վերաբերում է Հայոց Եկեղեցու դավանաբանական դիրքորոշմանը: Հայտնի է, որ Զ դ. 20-ական թվականներին միաբնակությունը դավանաբանական հողի վրա պառակտվում է երկու հակամարտ կուսակցության, որոնց առաջնորդներն էին քաղկեդոնական հալածանքների պատճառով իրենց աթոռներից զրկված և Աղեքսանդրիա ապաստանած Հուլիանոս Հալիկառնացի և Սեւերոս Անտիոքացի եպիսկոպոսները: Առաջինի կարծիքով՝ Քրիստոսի մարմինը մարդկային այնպիսի կարիքների, ինչպիսիք են քաղցը, ծարաւը, հոգնությունը, քունը, քրտինքը, արտասուքը և այլն, ենթարկվում էր ոչ թե հարկադրաբար, այլ ինքնակամ կերպով: Դրան հակառակ Սեւերոսը պնդում էր, որ Քրիստոսի մարմինը մարդկային մարմինների նման ապականացու է եղել: Հակոբ Բարադեոս եպիսկոպոսի ջանքերով միաբնակ ասորիների մեծ մասը, որը հետագայում իր հիմնադրի անունով հորջորջվեց Հակոբիկյան Եկեղեցի, անցավ Սեւերոս Անտիոքացու կողմը: Սակայն Հակոբիկյան Եկեղեցու ազդեցությունից դուրս մնացած միաբնակ ասորիները, մասնավորապես նրանք, ովքեր բնակվում էին հյուսիսային Միջագետքի պարսկական տիրապետության տակ գտնվող գավառներում, որդեգրեցին հուլիանականությունը:

Ինչպես վերը նշեցինք, այս շրջանների ասորիները սերտ կապերի մեջ էին Հայոց Եկեղեցու հետ: Այդ պատճառով բնականաբար նրանց միջոցով՝ հատկապես վերոհիշյալ Աբդիշո եպիսկոպոսի ջանքերով հուլիանականությունը թափանցում է նաև Հայաստան: Դվինի 554 թ. ժողովը պաշտոնապես դատապարտում է Քրիստոսի մարմնի ապականացու լինելու ուսմունքը և նզովում Սեւերոս Անտիոքացուն: Սակայն Ե. Տեր-Մինասյանը իրավացիորեն նշում է, որ չի կարելի այս հարցում չափազանցել ասորիների դերը: Հուլիանականության որդեգրումը Հայոց Եկեղեցու կողմից նա բացատրում է նրանով, որ «յուլիանական ուսմունքը յունական փիլիսոփայության գաղափարի հետևողական զարգացումն էր, և Հայոց Եկեղեցու ներքին զարգացումն էլ բնականաբար այդ ուղղությամբ է ընթացել»[18]:

Եթե, ինչպես տեսանք, արաբական նվաճումներից առաջ Հայոց Եկեղեցին հիմնականում շփվում էր միաբնակ ասորիների սուանձին թեմերի հետ, ապա այդ նվաճումների հետևանքով հնարավորություն է ստեղծվում սերտ կապեր հաստատել նաև Հակոբիկյան պաշտոնական Եկեղեցու հետ: Հայտնվելով մեկ պետության՝ Արաբական ընդարձակ խալիֆայության կազմում, հայերն ու ասորիները ձգտում են միասնական ճակատ կազմել քաղկեդոնականության դեմ: Այդ նպատակով Հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցին (717—728 թթ.) և Հակոբիկների Աթանասիոս պատրիարքը

[16] Անդ:

[17] Անդ, էջ 105:

[18] Անդ, էջ 121:

726 թվականին Մանազկերտում ժողով են գումարում և Հայոց ու Ասորոց Եկեղեցիների միջև միություն հաստատում: Գործը գլուխ բերելու համար կողմերը ստիպված են լինում դավանաբանական հարցերում փոխադարձ զիջումներ կատարել: Դրա հետևանքով Մանազկերտի ժողովում Սեբեոսի կողքին նզովվում է նաև Հուլիանոս Հալիկառնասցին: Սակայն, ինչպես համոզիչ կերպով ցույց է տալիս Ե. Տեր-Մինասյանը, այդ նզովքը իրականում դիվանագիտական քայլի արտահայտություն է եղել, և հայերը ըստ էության հետագայում էլ չեն հրաժարվել հուլիանականության հիմնական գաղափարներից:

3. Ե. Տեր-Մինասյանի երրորդ նշանակալից ներդրումը հայ-ասորական կապերի ուսումնասիրման խնդրում՝ նեստորական քարոզիչների Հայաստանում ծավալած գործունեության բացահայտումն է: 1946 թ. լույս ընծայած իր ամփոփ ուսումնասիրությամբ Ե. Տեր-Մինասյանը ապացուցեց, որ նեստորական վարդապետները մոտ 200 տարի շարունակ՝ սկսած Ե դ. 30-ական թթ. մինչև Է դ. սկիզբը, բազմաթիվ փորձեր են կատարել Հայաստանում իրենց ուսմունքը տարածելու: Ի դեպ պետք է նշել, որ դրանից առաջ բանասիրության մեջ նկատվում էր Հայաստանում նեստորականության խաղացած դերի չափազանցման[19] կամ, ընդհակառակն, անտեսման[20] երկու ծայրահեղ միտում:

Նեստորականների՝ Հայաստանում ծավալած գործունեության առաջին հիշատակությունը կապված է Սահակ Պարթևի և Մաշտոցի անունների հետ: Եփեսոսի ժողովից հետո, որին հայերը չէին մասնակցել, Կոստանդնուպոլսի Պրոկղ և Մելիտենեի Ակակ եպիսկոպոսները առանձին թղթերով Հայոց Եկեղեցու առաջնորդներին զգուշացնում են նեստորական վարդապետությունից մոլորվելուց: Սահակն ու Մաշտոցը պատասխան թղթերում հայտնում են, որ իրենք վճռական միջոցառումներով կանխել են նեստորական քարոզությունը Հայաստանում:

Նեստորականությունը Հայաստանում ավելի համարձակ գործողությունների է դիմում հատկապես Ե. դ. 80-ական թթ., երբ Սասանյան արքունիքի հովանավորությամբ այն ճանաչվում է Պարսկաստանի ասորախոս Եկեղեցու պաշտոնական դավանանքը: Ողջ Զ դարը նշանավորվում է նեստորականության դեմ Հայոց Եկեղեցու մղած անընդհատ պայքարով, որի ընթացքում վերջինս երբեմն դիմում է նույնիսկ աշխարհիկ իշխանությունների օգնությանը: Նեստորականության հարցը քննարկվել է Հայոց Եկեղեցու երկու ժողովներում՝ 506 և 554 թվականներին, որոնք վճռականորեն դատապարտել են այդ ուսմունքը և նզովել նրա հեղինակություններին՝ Նեստորին, Թեոդոր Մոպսուեստացուն, Դիոդոր Տարսոնացուն, Թեոդորետ Կյուրացուն, Բարծումա Մծբնացուն և այլն:

Ուշադրության արժանի է Ե. Տեր-Մինասյանի հատկապես այն դատողությունը, որ նեստորականությունը Հայաստանում հիմնվել է Հայոց Եկեղեցուց դժգոհ զանազան տարրերի, մասնավորապես մծբնեից աղանդի մնացուկների վրա: Պետք է ավելացնել նաև, որ աղբյուրների հավաստի վկայությամբ նեստորականները հենվել են նաև Հայոց ազդեցության տակ գտնվող մյուս ժողովուրդների վրա՝ հավանաբար օգտագործելով նրանց և հայերի ազգային հասկանալի հակասությունները: Հայտնի է, օրինակ, որ Զ դ. վերջում և Է դ. սկզբում նեստորականները որոշ հաջողություն են ունեցել Վրաստանում և Աղվանքում՝ հարուցելով Հայոց Եկեղեցու առաջնորդների զայրույթը:

Հետաքրքիր է նաև Ե. Տեր-Մինասյանի այն միտքը, որ Հայաստանում նեստորականությունը դասվել է քաղկեդոնականության շարքը՝ իհարկե այդ դավանանքների մերձավորության լիակատար գիտակցությամբ, իսկ հանախ պարզապես այդ դավանանքները նույնն են համարվել:

Նեստորականների եռանդուն գործունեությունը Հայաստանում բացատրվում է այն հանգամանքով, որ, ինչպես վերը նշվեց, նրանք վայելում էին պարսից արքունիքի աջակցությունը. Սասանյան կայսրության վերացմամբ այդ գործունեությունը փաստորեն լիովին դադարում է: Դա ցույց է տալիս, որ ի տարբերություն քաղկեդոնականության, որը հայերի մեջ միշտ էլ բավականին կողմնակիցներ է ունեցել, նեստորականությունը Հայոց Եկեղեցու համար ներկայացրել է միայն արտաքին վտանգ, չկարողանալով որևէ կերպ ազդել նրա ներքին կյանքի վրա:

Ե. Տեր-Մինասյանը մեծ ծառայություն ունի նաև Հայոց Եկեղեցու պատմության ամենաշրջադարձային իրողություններից մեկի՝ քաղկեդոնականության նկատմամբ բռնած դիրքի լուսաբանման գործում: Նրա

[19] Տե՛ս **Н. Марр**, Аркаун, монгольское название Христиан, в связи с вопросом об армянах—халкедонитах, СПб., 1905, стр. 3.

[20] Տե՛ս **Ստ. Մալխասյան**, Մովսես Խորենացին քաղկեդոնական էր, «Տեղեկագիր ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի», 1944 թ., № 3—4, էջ 38—39;

նմի շարք աշխատությունների շնորհիվ կամելի է վերջնականապես լուծված համարել, որինակ, այն հարցը, որ Հայոց Եկեղեցին առաջին անգամ Քաղկեդոնի ժողովը պաշտոնապես դատապարտել է 554 թվականին՝ Դվինի երկրորդ ժողովում:

Բացի պատմագիտական բնույթի այս ընդհանուր խնդիրներից, Ե. Տեր-Մինասյանը հայ-ասորական հարաբերություններին նվիրված իր հետազոտություններում դնել է նաև բազմաթիվ մասնակի հարցեր, տ'շտել մի շարք եկեղեցական ժողովների ժամանակը, բացահայտել նրանց գումարման շարժառիթները և կայացրած վճիռները: Լիովին պարզված պետք է համարել, որինակ, Դվինի առաջին և երկրորդ ժողովների (506 և 554 թթ.), այսպես կոչված Պարսից ժողովի (613 թ.) և վերջապես՝ Մանազկերտի ժողովի (726 թ.) հանգամանքները:

Ամփոփելով այս համառոտ վերլուծությունը՝ կարող ենք նշել, որ Ե. Տեր-Մինասյանը հանդիսանում է հայ-ասորական պատմա-եկեղեցական հարաբերությունների մեծագույն հետազոտողը, որի հետևությունների շատերը մնայուն տեղ են զբաղեցնում արդի հայ պատմագիտության նվաճումների շարքում և, պետք է հուսալ, որ նրանք իրենց արժանի արտացոլումը կգտնեն «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության սպասվող հատորում: